# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«22» հունվարի 2021 թվականի N 05

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, Ք.ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 24 ՀԱՍՑԵԻ, 06-007-0057-0002 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մանյա Մագթաղյանի կողմից ներկայացված 22.01.2021թ. թիվ Մ-30 դիմումը, 13.09.2002թ. թիվ 610966 անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի պետական գրանցման վկայականը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1 -ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ *որոշում եմ.*

1. Հաստատել Ստեփանավան քաղաքի Երիտասարդական փողոց թիվ 24 հասցեում գտնվող անշարժ գույքի նոր փոստային հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ Ստեփանավան համայնք, ք.Ստեփանավան Երիտասարդական փողոց թիվ 28/1 բնակելի տուն :
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«25» հունվարի 2021 թվականի N 06

## ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 10-րդ կետի, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին կետը՝ *որոշում եմ.*

1. Սահմանել Ստեփանավան համայնքի 2021 թվականի համար եկամուտների և ծախսերի եռամսյակային համամասնությունները՝ համաձայն 1, 2 հավելվածների:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

«27» հունվարի 2021 թվականի N 07

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, Ք.ՍՏԵՓԱՆԱՎԱՆ Հ. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՓՈՂՈՑ ՀԱՍՑԵԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սարգիս Ղարաքեշիշյանի կողմից ներկայացված 25.01.2021թ. թիվ Ղ-36 դիմումը 02.10.2002թ. թիվ 902713 անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի պետական գրանցման վկայականը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Ստեփանավան քաղաքի Հ.Ավետիսյան փողոց հասցեում գտնվող անշարժ գույքի նոր փոստային հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ Ստեփանավան համայնք, ք. Ստեփանավան Հ. Ավետիսյան փողոց թիվ 17/2 խանութ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29» հունվարի 2021 թվականի N 08

## ԱՆՉԱՓԱՀԱՍ ՀԱՍՄԻԿ ԳՐԻՇԱՅԻ ԽՍՊԻՐՅԱՆԻՆ ԱՌԱՆՑ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՄՆԱՑԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Տաթևիկ Կոլյայի Հակոբյանը և Գրիշա Վահագի Իսպիրյանը փաստացի ամուսնական հարաբերությունների մեջ են եղել սկսած 2002 թվականից: Համատեղ ամուսնության ընթացքում ունեցել են մեկ երեխա՝ Հասմիկ Գրիշայի Իսպիրյանին /ծնված 02.11.2003թ./: Երեխայի մայրը՝ Տաթևիկ Կոլյայի Հակոբյանը մահացել է 11.10.2006թ. /մահվան վկայական՝ ԱԱ-052595/: Հայրը՝ Գրիշա Վահագի Իսպիրյանը մահացել է 25.03.2007թ. /մահվան վկայական՝ ԱԲ-205160/:

2006 թվականի հոկտեմբեր ամսին երեխայի մայրական կողմի տատը՝ Սեդա Արմենակի Հակոբյանը, որը հանդիսանում է երեխայի միակ ազգականը դիմել է Ստեփանավանի քաղաքապետարան իր թոռան՝ Հասմիկ Գրիշայի Իսպիրյանի նկատմամբ խնամակալություն սահմանելու համար:

Ստեփանավանի քաղաքապետի 27.10.2006թ. թիվ 464 որոշմամբ Սեդա Արմենակի Հակոբյանը նշանակվել է խնամակալ անչափահաս Հասմիկ Գրիշայի Իսպիրյանի նկատմամբ:

Ստեփանավան համայնքի ղեկավարի 02.08.2018թ. թիվ 240 որոշմամբ Սեդա Արմենակի Հակոբյան ընշանակվել է հոգաբարձու անչափահաս Հասմիկ Գրիշայի Իսպիրյանի նկատմամբ:

27.01.2021թ. Ստեփանավանի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի նիստում քննարկվեց Հասմիկ Գրիշայի

Իսպիրյանին առանց ծնողական խնամքի մնացած ճանաչելու և սկզբնական հաշվառման վերցնելու հարցը:

Հիմք ընդունելով Ստեփանավանի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 27.01.2021թ. եզրակացությունը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգիրքի 43-րդ հոդվածով, «Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 02.06.2016թ. թիվ 631-Ն որոշման 8-րդ հոդվածի 3-րդ կետով, 9-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» և «բ» ենթակետերով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Անչափահաս Հասմիկ Գրիշայի Իսպիրյանին /ծնված 02.11.2003թ./ ճանաչել առանց ծնողական խնամքի մնացած:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ** **Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ**